2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 354-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 10-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 09.08.2007թ. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 1032-Ն որոշումով և հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի, 269 հասցեում գտնվող, 06-002-0629-0001-ից առանձնացված, 0.02333 հա մակերեսով բնակավայրերի այլ հողատեսքի հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման նշանակության:
2. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. դեկտեմբերի 01

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 355-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի դրույթներով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2021 թվականի դեկտեմբերի 03-ին, ժամը 16.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 03-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

2. Ալավերդի համայնքի տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

3. Ալավերդի համայնքի 2021 թվականի բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

4. Ալավերդի համայնքի ավագանու 30.07.2020թ. N 60-Ա որոշման 2-րդ կետում փոփոխություն կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

5. «Ալավերդու համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ին պլաստիկ թափոնների պահեստ կառուցելու նպատակով, անհատույց օգտագործման իրավունքով, հողամաս տրամադրելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

7. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ «Ալավերդի համայնքի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 1-ին մասնաշենքի 2-րդ հարկից 150.4 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

8. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, N 61/8 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու, աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

9. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/10-1 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

10. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազան փողոց, N 7/4 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Ակներ թաղամասի վարչական սահմաններում գտնվող 0.07865 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

12. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հաղպատ գյուղի վարչական սահմանում գտնվող, 0.04 հա մակերեսով հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

13. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հաղպատ գյուղի վարչական սահմանում գտնվող, 0.14 հա մակերեսով հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 02
ք. Ալավերդի